ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՍԵՆ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՍՏՐԱՍԲՈՒՐԳ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Արսեն Ռոբերտի Քարամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Ֆրանսիայի Հանրապետություն, Ստրասբուրգ, 2017 թ. հոկտեմբերի 16-18-ը

4. **Հրավիրող կողմը՝** Եվրոպայի խորհրդի երիտասարդական դեպարտամենտ

5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Երիտասարդության հարցերի Եվրոպական ղեկավար կոմիտեի 59-րդ և Երիտասարդության հարցերի միացյալ խորհրդի 37-րդ հանդիպումներին

6. **Քննարկված թեմաները**

- Երիտասարդական դեպարտամենտի ղեկավար Անտյե Ռոտհամունդի կողմից ներկայացված՝ նախորդ նիստից հետո դեպարտամենտի կողմից իրականացված գործունեության ամփոփ հաշվետվություն
- Անդամ երկրների կողմից երիտասարդական քաղաքականության վերջին զարգացումները
- Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ Նախարարական խորհրդի հանձնարարականների իրականացման լավագույն օրինակների փոխանակում
- Անդամ երկրներում «Ո՛չ առցանց ատելության խոսքի» արշավի ընթացիկ իրականացվող ծրագրերը
- Երիտասարդական քաղաքականության ինքնագնահատման գործիքի քննարկում
- 2018-2019 միջոցառումների ծրագրի առաջնայնությունների քննարկում և մեկ տասնյակ այլ օրակարգային հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Տեղի ունեցան մի շարք աշխատանքային հանդիպումներ Եվրոպական երիտասարդական հիմնադրամի ղեկավար Ժան-Կլոդ Լազարոյի, Երիտասարդական քարտի հիմնադրամի նախագահ Մանել Սանչես Գարսիայի և ԵԽ երիտասարդական դեպարտամենտի կրթական ծրագրերի բաժնի ղեկավար Ռուի Գոմեսի հետ: Քննարկվեցին ԵԽ երիտասարդական դեպարտամենտի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետագա համագործակցության հարցերը և ձևաչափերը:

Նստաշրջանի ընթացքում ներկայացվեց Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական քաղաքականության վերջին զարգացումների մասին ամփոփ զեկույց, որում ընդգրկված էին Հայաստանի Հանրապետության երիտասարդական քաղաքականության 2017 թվականի առաջնայնությունների իրականացման ընթացքի և 2018 թվականի առաջնայնությունների մասին հարցերը:

Աշխատանքային խմբերում քննարկվեցին և լիագումար նիստի հաստատմանը ներկայացվեցին ԵԽ երիտասարդական դեպարտամենտի ընթացիկ երեք առաջնայնությունների ուղղությամբ իրականացված ծրագրերը, դրանց արդյունքները և հետագա փոփոխությունների փաթեթը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում ընդունվեցին հետևյալ որոշումները.

- Աշխատանքային կարգով որոշում ընդունվեց 2018 թվականի ՀՀ երիտասարդական աշխատողների վերապատրաստման ծրագիրն իրականացնել ԵԽ երիտասարդական դեպարտամենտի հետ համատեղ
- Հաստատել Երիտասարդական քաղաքականության ինքնագնահատման գործիքը և խրախուսել անդամ երկրներին՝ այն կիրառելու պետական երիտասարդական քաղաքականության գնահատման համար
- Քննարկվեցին հաջորդ հանդիպման տեղի և ժամկետների վերաբերյալ հարցերը. հաջորդ նստաշրջանը կայանալու է Հունգարիայի Հանրապետության Բուդապեշտ քաղաքում 2018 թվականի մարտի 26-28-ը:

9. Գործուղվողը՝ Արսեն Ռոբերտի Քարամյան

Ստորագրությունը, ամսաթիվը

Արսեն Ռոբերտի Քարամյան

23.10.2017 թ.